Դատավորի օգնական Պ-ն առաջարկեց դատավոր Ե-ին՝ գործերից մեկով կողմ հանդիսացող Ա-ից որոշակի գումար պահանջել՝ վերջինիս օգտին դատական ակտ կայացնելու համար: Դատավորի համաձայնությունը ստանալուց հետո Պ-ն իր մոտ կանչեց Ա-ին, ներկայացրեց պահանջը և տվեց մեկ օր ժամանակ գումարը բերելու համար: Ա-ն հաջորդ իսկ օրը Պ-ին փոխանցեց գումարը: Ինչպե՞ս պետք է որակել Պ-ի և Ե-ի արարքները.

ա) Ե-ի արարքը՝ կաշառք ստանալ, Պ-ի արարքը՝ պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային պաշտոն զբաղեցնող անձի, հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալ,

բ) Ե-ի և Պ-ի արարքները՝ մի խումբ պաշտոնատար անձանց կողմից կաշառք ստանալ,

գ) Ե-ի արարքը՝ կաշառք ստանալ, Պ-ի արարքը՝ կաշառք ստանալու կազմակերպում,

դ) Ե-ի արարքը՝ կաշառք ստանալ, Պ-ի արարքը՝ կաշառք ստանալու օժանդակություն: